



# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ

№ 81Ը3 « 04 » 05 2018

## 2017/2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ 2-ՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի պետական համալսարանում կրթական ծրագրերի պահանջների կատարումն ապահովելու նպատակով, ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետով.

### հրամայում եմ

1. ԵՊՀ բակալավրիատի և մագիստրատուրայի ոչ ավարտական կուրսերի 2017/2018 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ուսումնական պարապմունքներն ավարտել 2018թ. հունիսի 8-ին:

2. Բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ոչ ավարտական կուրսերի 2017/2018 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանն անցկացնել 2018թ. հունիսի 11-ից մինչև 30-ն ընկած ժամանակահատվածում:

3. Առկա ուսուցման համակարգի 2017/2018 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի 2-րդ ընթացիկ քննություններն անցկացնել 2018թ. հունիսի 4-ից մինչև 8-ն ընկած ժամանակահատվածում:

4. Հեռակա ուսուցման համակարգի 2017/2018 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի 1-ին ընթացիկ քննություններին չներկայացած ուսանողներին թույլատրել քննությունները վերահանձնել 2018թ. մայիսի 10-ից մինչև 15-ն ընկած ժամանակահատվածում:

5. Հեռակա ուսուցման համակարգի 2017/2018 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի 2-րդ ընթացիկ քննություններն անցկացնել 2018թ. մայիսի 29-ից մինչև հունիսի 9-ն ընկած ժամանակահատվածում:

6. Սույն հրամանի մասին, սահմանված կարգով տեղեկացնել ԵՊՀ ֆակուլտետներին (ինստիտուտներին, կենտրոններին) և ուսանողներին:

7. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ

Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ